



Փ Ա Ր Ո Ս *Paros*

ISSUE 24 - JULY / ԹԻԻ 24 – ՅՈՒԼԻՍ 2019

NEWSLETTER OF THE DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AUSTRALIA & NEW ZEALAND

ԹԵՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Գ2 2 Յուլիս – Բարձրաշնորհ Տեր Հայկազուն Արք Նաճարեան, բարեխնամ Առաջնորդ Աւստրալիոյ եւ Նոր Չելանտայի թեմին, նախագահեց Կալուածոց Յանձնախումբի հերթական ժողովին:

Գ2 3 Յուլիս – Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Արժ Տեր Աւետիս Քահանայ Համբարձումեանի, Թեմական Խորհուրդի անդամներ Սարգիս Տեր Պետրոսեանի, Ստեփան Գրգեաշարեանի, Կարօ Ալաճաճեանի, Գեորգ Չափրազեանի եւ Դիւանապետ Նշան Պասամճեանի, այցելութիւն տուաւ Նիւ Սաութ Ուելլզի նահանգապետուհի Օրիորդ Գլատիս Պերէճիքեանին Մարթին Փլէյսի իր գրասենեակին մէջ, շնորհաւորելու համար անոր գահակալութիւնը եւ տալու համար իր եւ Հայ համայնքին բարեմտականքն ու իր օրհնութիւնը, որպէսզի օրհնաբեր դառնայ Օրիորդ Պերէճիքեանի առաքելութիւնը: Հանդիպումը տեւեց մօտաւորապէս մէկ ժամ: Նահանգապետուհին, ինչպէս միշտ, իր սիրալիր ժպիտով ու հարազատութեամբ ընդունեց պատուիրակութիւնը:



Արժարծուեցան երկրի յառաջդիմութեան համար նահանգապետուհիին ու իր նորակազմ դահլիճին առած դրական որոշումները ինչպէս նաեւ նահանգապետուհի-Հայ համայնք յարաբերութիւնները: Արժարծուեցան նաեւ կրօնական ազատութեան

առնչուող հարցեր: Կատարուեցան առաջարկներ յատկապէս Քրիստոնեայ տօներու առթիւ Խորհրդարանի կողմէ կազմակերպելի հիւրասիրութեանց առնչուած: Նահանգապետուհին տրամաբանական նկատեց տրուած առաջարկները եւ խոստացաւ փորձել իրագործել զանոնք: Հանդիպման ւարտին Սրբազան Հայրը, յանուն Հայ համայնքին եւ Թեմական Խորհուրդին, սրբանկար մը նուիրեց նահանգապետուհիին որ մեծապէս գնահատուեցաւ անոր կողմէ: Վերջին տարիներուն, Նահանգապետուհին գործնական նուաճումներ կատարեց յօգուտ Նիւ Սաութ Ուելլզ նահանգի բնակիչներուն, ան ջատագով է բազմամշակոյթին եւ մեծ աշխատանք կը տանի այդ ուղղութեամբ: Ան նաեւ զօրաւիզ է հայ դատին եւ հայ համայնքին ի նպաստ տարուած եւ տարուող աշխատանքներուն: Նախ քան բաժանում Սրբազան Հայրը հրաւիրեց Նահանգապետուհին այցելելու նորակառոյց Առաջնորդարան, զոր նահանգապետուհին խոստացաւ կատարել:



Ուրբ 5 Յուլիս – Սրբազան Հայրը իր գրասենեակին մէջ ընդունեց Աւստրալիոյ մէջ Արցախի մնայուն ներկայացուցիչ Պրն Քայլար Միքայէլեանը եւ Աւստրալիոյ Հայ Դատի Յանձնախումբի գործադիր տնօրէն Պրն Հայկ Գայսերեանը: Հանդիպումը կը վերաբերէր Արցախէն պատուիրակութեան մը ընդունելուն: Սրբազան Հայրը իր գործնական զօրակցութիւնը յայտնեց եւ իր գործակցութեան պատրաստակամութիւնը:

Ուրբ 5 Յուլիս – Տարբեր առիթներով, կազմակերպութեամբ Օրիորդ Թերեզա Փիրոլայի, զանազան Կաթոլիկ դպրոցական խումբեր, այցելած են Սուրբ Յարութիւն Առաջնորդանիստ եկեղեցի ծանօթանալու համար Հայաստանէայց Առաքելական Եկեղեցոյ, Հայ ժողովուրդին ու անոր բազմադարեան պատմութեան նամանաւանդ իմանալու Հայոց Յեղասպանութեան մասին: Օրիորդ Փիրոլա 2014էն ի վեր մեծ բարեկամ է մեր եկեղեցոյ, մասնակցած է Առաջնորդարանի կազմակերպած շատ մը ձեռնարկներուն: Ան Պրոքթըր Պէյ Կաթոլիկ Թեմի վարժարաններու քրիստոնէական ուսուցման վերահսկիչ պատասխանատուն է ինչպէս նաեւ պատասխանատուն միջկրօնական յարաբերութեանց եւ էքիմենիզմի (Projects Officer / Ecumenism and Interfaith Relations Catholic Diocese of Broken Bay): Ան հեղինակ է զանազան հրատարակութիւններու յատկապէս գիրքերու, որոնք կը ծառայեն քրիստոնէութեան ուսուցման Կաթոլիկ ամենօրեայ եւ կիրակնօրեայ վարժարաններու մէջ:



Անոր գլխաւորած խումբը այս անգամ կը բաղկանար Ուայթարա արուարձանի St Leo's College ի ուսուցչական կազմի 18 անդամներէն, որոնք որպէս վերապատրաստման (professional development) թեմա ընտրած էին Հայաստանէայց Առաքելական Եկեղեցոյ եւ Հայ ժողովուրդի վերջին հարիւր տարիներու պատմութիւնը: Փոխն ի փոխ, Օրիորդ Փիրոլա եւ Պարոն Տանիէլ Փէթրի (Տնօրէն) հիւրընկալներուն (Սրբազան Հայր, Տէր Աւետիս Քինյ Համբարձումեան եւ Դիւանապետ Նշան Պասաճեան) ներկայացուցին ուսուցիչները, որոնք զանազան նիւթեր կը դասաւանդեն ինչպէս կրօն, գիտութիւն, համակարգչային



գիտութիւններ, երաժշտութիւն, արուեստ, պատմութիւն եւլն, որմէ ետք Սրբազան Հայրը բացատրութիւն տուաւ Հայ եկեղեցոյ պատմութեան, Հայոց ցեղասպանութեան դրդապատճառներուն, Հայ ժողովուրդի պահանջատիրութեան, 1916-1923 Աւստրալիոյ պետութեան եւ ժողովուրդին յօգուտ հայութեան խաղցած մարդասիրական մեծ դերին մասին: Ուսուցիչները բազմաթիւ հարցումներ տուին Սրբազան հօր, որոնց ան մանրամասնութեամբ պատասխանեց, յստակացնելով անոնց մտքերուն մէջ յաճախ ծագած շփոթը մանաւանդ աստուածաբանական նիւթերու կապակցաբար: Աւարտին, Դիւանապետի առաջնորդութեամբ խումբը այցելեց Պօշան Փարքի Յեղասպանութեան յուշակոթող-խաչքար, ուր Օրիորդ Փիրոլա, Տիկին Լարէն Պօկիւրածքի եւ Դիւանապետը կատարեցին աղօթք ի հանգիստ Հայ 1,5 միլիոն նահատակներուն: Օրիորդ Փիրոլա, մեծապէս գոհացած վերապատրաստման այս դասընթացքէն, խոստացաւ նոր խումբ մը առաջնորդել յաջորդող մի քանի ամիսներուն ընթացքին:



Շբ 6 Յուլիս – Դիւանապետ Նշան Պասմաճեան, Նիւ Սաուր Ուելջ Էքիւմենիքըլ Քաունսըլի տարեկան դրամահաւաքի կազմակերպիչի հանգամանքով, ընկերակցութեամբ դպտի համայնքի քահանայ Հայր Եուսէֆ Ֆանուսի, հանդիպում-ժողով մը ունեցաւ Ասորի համայնքապետ Սար Միլիս Արքեպիսկոպոս Զայայի հետ: Այս տարուան դրամահաւաք-ճաշկերոյթը տեղի պիտի ունենայ Ասորիներու Սուրբ Հուրմիզտ Տաճարի սրահին մէջ, Կրինֆիլտ Փարք, 11 Օգոստոսին, որուն ներկայ պիտի ըլլայ նաեւ Հայկազուն Արք.Սրբազան Հայրը եւ Հայ համայնքէն ներկայացուցիչներ: Համայնքապետ Զափա իր առատաձեռն աջակցութիւնը յայտնեց եւ գործնական առաջարկներ կատարեց կազմակերպիչներուն: Ան խոստացաւ տասնեակ Ասորի երիտասարդներ հրաւիրել ճաշկերոյթին եւ աջակցիլ ճաշերու մատակարարման: Գաղթող եկեղեցիներու դիմագրաւած մարտահրաւերները» (The challenges of the migrant churches): Ընթացքին ելոյթ պիտի ունենայ նաեւ Ասորի համայնքի ազգագրական պարախումբը: Համայնքապետը եղբայրական յարաբերութիւն ունեցած է Հոգեւոյս Աղան Սրբազանին հետ, որ կը շարունակուի ցայսօր Սրբազան Հօր հետ:



Շբ 6 Յուլիս – Համազգային Թարգմանչաց Վարժարանի տնօրէնուհի Տիկին Զարուհի Մանուկեանի հրաւերին ընդառաջելով, Սրբազան Հայրը այցելեց Վարժարան հոգեւոր գիտելիքներ փոխանցելու համար աշակերտութեան եւ ուսուցչական կազմին: Բազմավաստակ ուսուցչուհի Տիկին Մանուկեան, երկու տարիէ ի վեր տարին մի քանի անգամ, դպրոց կը հրաւիրէ Սրբազան Հայրը, աշակերտութեան մէջ ամրապնդելու համար Հայու պատկանելիութիւնը եւ Քրիստոնէայ հաւատքը: Սրբազան Հայրը մեծ ուրախութեամբ կ'ընդառաջէ հրաւերներուն եւ միշտ պատրաստակամութիւն յայտնած է այցելելու որեւէ Հայ կրթական օճախ վերոնշեալ առաքելութեամբ: Սրբազան Հայրը խօսեցաւ աշակերտներուն տաղաւար տօներու, գրերու գիտի, Հայ սուրբերու ինչպէս նաեւ աղօթքի գործութեան մասին: Տեղի ունեցաւ երկխօսութիւն, որուն ընթացքին աշակերտները Սրբազան Հօր ուղղեցին հարցումներ եւ փոխադարձաբար:



ձաբար: Թարգմանչաց վարժարանի մէջ ստեղծուած հոգեւոր սնունդ ջամբելու դրութիւնը խիստ քաջալերելի է եւ կարեւոր:


Պշ 10 Յուլիս – Կազմակերպութեամբ Հայ Գաղութիւ Բարեկեցութեան Կեդրոնի տնօրինութեան Սրբազան հայրը մասնակցեցաւ մեծահասակներու ամսական պտոյտին, որուն մասնակցեցան 40 տարեցներ: Վայր՝ Վօքլիւզ Հաուս (Vaucluse House), Սիտնիի առաջին Տուն-Թանգարանը, կառուցուած 1803 թուականին: Պտոյտին մասնակցեցաւ նաեւ Արժ Տէր Նորայր Աւագ Քահանայ Բաթանեանը երէցկնոջ հետ միասին: Մասնակիցներուն ջախջախիչ մեծամասնութիւնը առաջին անգամն էր որ կ'այցելէր այս վայրը: Բոլոր մասնակիցները մեծ տպաւորութեամբ եւ բարձր տրամադրութեամբ վերադարձան դաստիարակչական բնոյթ կրող այս պտոյտէն: Այստեղ հարկ է անդրադառնալ նորանշանակ Երէցկին Յասմիկ Համբարձումեանի ջանքերուն, որոնց շնորհիւ յաջորդաբար երրորդ պտոյտն է որ կը կազմակերպուի մեծ խանդավառութիւն ստեղծելով մեր տարեց մայրիկներուն եւ հայրիկներուն մօտ:



Ուրբ 12 Յուլիս – Հովանավորությամբ Սրբազան Հօր եւ կազմակերպությամբ ՀԲԸՄԻ Միտնիի մասնաճիւղի վարչութեան տեղի ունեցաւ շնորհահանդէսը Միխիթարեան Միաբան Հայր Վահան Օհանեանի եւ աստրալահայ մտաւորական Վահէ Քէթիպեանի ուսումնասիրած եւ հրատարակած մեծածաւալ 5 հատորներուն՝ *The Armenian Genocide – Prelude and Aftermath As Reported in the US Press* խորագրով:



Սրբազան Հօր ընկերակցեցան Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեան, Թեմական Խորհուրդի Ստեփան Սարգիս Տէր Պետրոսեան, Փոխ Ստեփան Ստեփան Գրգեաշարեան, Ս. Յարութիւն Եկեղեցոյ Օխական Խորհուրդի ատենապետ Պետրոս Զօրլու եւ Դիւանապետ Նշան Պասմաճեան: Ներկայ էին հայկական զանազան կազմակերպութեանց ներկայացուցիչներ եւ 100է աւելի Հայ դպրութեամբ եւ Հայոց պատմութեամբ հետաքրքրուող հայորդիներ: Հանդիսավարութիւնը կատարեց Սարգիս



Մանուկեան, որ ներկայացնելէ ետք Հայր Սուրբը եւ իր գործը, կուտ բառերով բնորոշեց այս հրատարակութիւնը որպէս «ապտակ բոլոր անոնց որոնք կը մերժեն ընդունիլ Հայոց Յեղասպանութիւնը»: Հայր Սուրբը, ամբողջ 12 տարի բժախնդորէն հաւաքած է 1890-1922 թուականներուն Ամերիկեան թերթերու մէջ հրատարակուած յօդուածներ, որոնք կը վերաբերին Հայ ժողովուրդի տխուր պատմութեան եւ ցեղասպանութեան նկարագրուած ամերիկեան վեց թերթերու մէջ՝ *The Chicago Daily Tribune*, *The New*

York Times, *The Boston Daily Globe*, *The Washington Post*, *The Los Angeles Times*, *The Christian Science Monitor*: Ան, Արա Քէթիպեանի հետ միասին կարողացած է մաքրագրել բոլոր յօդուածները եւ զանոնք մեքենաշարել եւ ցուցակագրել (indexing): Հայր Սուրբը պատմեց թէ ինչպէ՞ս 2007 ին սկսած էր այս աշխատանքը քաջալերանք եւ ցուցմունք ստանալով աստրալահայ պատմաբան Վիզէն Բարզէնեանէն: Վերջինս ներկայ էր եւ իր կարգին ան էլոյթ ունեցաւ եւ բացատրութիւն տուաւ հրատարակուած 5 հատորներուն մասին եւ ըսաւ որ անոնց պարունակութիւնը տեղեկագրութիւն էր երբ ցեղասպանութեան առնչուող դէպքերը կը պատահէին եւ այդ ամէնօրեայ դրութեամբ, զայն բաղդատելով հրէաներու Ողջակիզման, որ տեղեկացուեցաւ դէպքերու (այս պարագային Համաշխարհային Բ Պատերազմի) աւսրտէն ետք: Ան կարեւոր գտաւ Հայր Վահանի աշխատանքը եւ զայն որակեց «Նուէր տրուած Հետազոտողներուն»: Ապա առիթ տրուեցաւ ներկաներուն կատարելու իրենց գնահատանքն ու ուղղելու իրենց հարցումները, որոնց սպառիչ պատասխան տուին Հայր Սուրբն ու Վիզէն Բարզէնեանը: Շինիչ առաջարկներէն մին էր այս հատորներու թրքերէնի թարգմանութիւնը:

Հանդիսութեան եզրափակիչ խօսքը արտասանեց Սրբազան Հայրը, որ շնորհակալութիւն յայտնելէ ետք նաեւ աստրալահայ գաղութի հպարտանք նկատեց այս հրատարակութիւնը, որովհետեւ Հայր Սուրբի կողքին հսկայ աշխատանք տարած էր եւ կը տանի աստրալահայ մտաւորական Արա Քէթիպեանը: Ան նաեւ բարձր գնահատեց այլ աստրալահայու մը Յեղասպանութեան պատմութեան մէջ կարեւոր ներդրումը յանձին աստրալահայ պատմաբան Վիզէն Բարզէնեանի: Նաեւ բարձր գնահատեց այն գործը որ Բարզէնեան ըրած է՝ Աստրալացի տեղեկացնելու թէ իր նախնիները ինչքան բարիք եւ մարդասիրական աշխատանք տարած են հայ որբերու, անկարներու եւ չքաւոր անտունիներու ի նպաստ: Սրբազանը բարձր գնահատեց բարերարներու կատարած զոհողութիւնը, ինչպէս նաեւ աստրալահայ նուիրատուներ Տէր եւ Տիկին Աւօ եւ Ճէքի Թեւանեան ամուլը: Սրբազանը չմոռցաւ Հայ նոր սերունդը, որուն պարտքը նկատեց պատմական իրականութեանց թարմացման եւ արխիւներու գտումի աշխատանքը: «Մեր պատմութիւնը անմոռանալի դարձնելը եւ ցեղասպանութեան անժամանցելիութիւնը փաստուած իրականութիւն պահելը մեր նոր սերունդներուն ժառանգ պիտի մնայ հետեւաբար հսկայ գործ կը սպասէ իրենց» ըսաւ Սրբազան Հայրը: Հայր Վահանի տարած եւ տանելիք աշխատանքներուն յաւելեալ մանրամասնութեանց մասին կարդալ այս թիւին մէջ Հայր Սուրբին հետ կատարուած շահեկան հարցազրոյցը:



Ուրբ 12 Յուլիս – Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի եւ Դիւանապետին, Առաջնորդարանին մէջ ընդունեցին Տէր եւ Տիկին Ժագ եւ Ճուլի Մաքսեանը: Տար Մաքսեան, որ բազում տարիներ կը բնակի Հոնկ Բոնկ, ազգային բարերար է եւ պատասխանատու անձ է Ծայրագոյն Արեւելքի հայկական կառոյցներու (Հոնկ Բոնկ, Թայլանտ, Մինկափուր եւլն): Տէր եւ Տիկին Մաքսեան անձնական այցելութեամբ կը գտնուէին Աւստրալիա:

Բշ 15 Յուլիս – Սրբազան Հայրը նախագահեց Հայաստան Համահայկական Հիմնադրամի (ՀՀՀ) Աւստրալիոյ մասնաճիւղի հերթական ժողովին: Օրիորդ Սօնա Պերպերեան եւ Տիկին Աստղիկ Մանուկեան, որոնք Պրն Հայկ Լէփէճեանի հետ միասին մասնակցած էին Երեւանի մէջ տեղի ունեցած ՀՀՀի ընդհանուր ժողովին, զեկուցեցին ժողովին տարուած աշխատանքներուն եւ ծրագիրներուն, ինչպէս նաեւ Նախագահ Արմէն Սարգիսեանի ընդունելութեան մասին: Տեղի ունեցան գնահատումներ եւ խորհրդակցութիւն մասնաճիւղին տանելիք ապագայ ծրագիրներուն մասին: Խօսուեցան մանրամասնութիւններ մասնաճիւղի կազմակերպած տարեկան դրամահաւաքի ձեռնարկին մասին:



Գշ 16 Յուլիս – Սրբազան հայրը իր գրասենեակին մէջ ընդունեց Տիկին Էմմա Մարշալ-Մեծօղլեանը, որ իր մագիստրոսի թէզը կը պատրաստէ *Միտնիաբնակ հայերու փորձառութեանց մասին որպէս գաղթող Սփիւռքահայեր, թէ որպէս Հայեր ինչպիսի՞ պատկանելիութիւն անոնք կարողացան ստեղծել Աւստրալիոյ մէջ, տրուած ըլլալով որ Միտնիի Հայերուն մեծամասնութիւնը Սփիւռքեան գաղութներէ գաղթած են եւ ոչ Հայաստանէն*: Հետեւաբար տիկինը կ'ուսումնասիրէ թէ այս հանգամանքը, մշակութային փոփոխութիւնները եւ զարգացումները ինչպիսի ազդեցութիւն ունեցած են անհատ Հայուն վրայ: Տիկինը հարցազրոյցներ կատարեց Երիտասարդ Մայրերու խումբի կարգ մը տիկիններու հետ ինչպէս նաեւ մեծահասակներու: Սրբազանը իր օրհնութիւնը տուաւ եւ յաջողութիւն մաղթեց տիկնոջ իր կարեւոր ուսումնասիրութիւններուն մէջ եւ Առաջնորդարանի պատրաստակամութիւնը յայտնեց աջակցութեան:

Գշ 16 Յուլիս – Հովանաւորութեամբ Սրբազան Հօր եւ ընկերակցութեամբ Հոգշ Տէր Երեմիա Վարդապետ Աբգարեանի, Արժ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի եւ Ատենապետ Սարգիս Տէր Պետրոսեանի, Առաջնորդ Հայրը ներկայ եղաւ Ոսկան Երեւանցիի մասին պատրաստուած ֆիլմի ցուցադրութեան, կազմակերպութեամբ ՀԲԼՄ Միտնիի մասնաճիւղի վարչութեան եւ մասնակցութեամբ ֆիլմարտադրիչ Նուէր Մնացականեանի, Բեմադրիչ Յակոբ Փափագեանի եւ Միսիթարեան Միաբանութեան Մատենադարանապետ պատմագիր Հայր Վահան Օհանեանի: Ֆիլմը կը բաղկանայ երեք մասերէ , առաջինը՝ Յակոբ Մեղապարտի եւ Աստուածաշունչի առաջին տպագրութեան մասին, երկրորդը՝ Ոսկան Երեւանցիի տարած գործունէութեան իսկ երրորդը՝ Վենետիկի եւ Միսիթարեան Հայրերու գործունէութեան մասին: Ցուցադրուեցաւ միայն երկրորդ մասը (մօտ 40 վայրկեան): Դայտի Events շարժապատկերի սրահը լեցուցած էին աւելի քան 300 Հայ եւ ոչ Հայ հանդիսատեսներ: Սարգիս Մանուկեան ներկայացուց Հայրենի հիւրերը եւ հակիրճ տեղեկութիւն տուաւ ֆիլմի մասին: Ֆիլմի աւարտէն ետք առիթ տրուեցաւ ժողովուրդին ուղղելու հարցումներ, որոնց պատասխանեցին հայրենի հիւրերը: Խօսք առաւ Հայ Վահան Օհանեան եւ խօսեցաւ Միսիթարեան Միաբանութեան մասնակցութեան մասին ֆիլմի յաջողութեան հետ կապուած:

Իր փակման խօսքին մէջ Սրբազան Հայրը շնորհակալութիւն յայտնեց եւ օրհնեց եւ ֆիլմը պատրաստողները եւ ձեռնարկը կազմակերպողները: Ան անդրադարձաւ թէ որքան դժուար էր այս օրերուն այսպիսի վաւերագրական ֆիլմ պատրաստելը: Ան ընդգծեց թէ Հայ ժողովուրդը աշխարհի կրնայ ներկայանալ իր հարուստ մշակոյթով, մշակոյթն է անոր զենքն ու զրահը, անով է որ կրնայ բաղդատուիլ աշխարհի ամենէն բարձր քաղաքակրթութեան հասած ազգերու հետ: Սրբազանը յաջողութիւն մաղթեց Տարք Նուէր Մնացականեանին եւ Յակոբ Փափագեանին իրենց ապագայ ծրագիրներուն մէջ յատկապէս աշխարհահռչակ Հայեր ներկայացնելու իրենց ծրագիրներուն, որոնցմէ Գալուստ Կիւլպենկեան եւ այլք:



Շբ 20- Բշ 22 Յուլիս – Ընկերակցութեամբ Տէր Աւետիսի, Վարդան Սարկաւազի, Սարգիս Տէր Պետրոսեանի եւ Աւօ Թեւանեանի Սրբազանը մեկնեցաւ Պրիսպրն, ուր պատարագեց շրջանի հայութեան համար գորացնելով անոնց կապը հայ հաւատքի, իրենց նախնեաց եւ աւանդութեանց հետ: Տեղի ունեցաւ նաեւ ժողովրդային հաւաք, որու ընթացքին հարցեր տրուեցան, որոնց սպառիչ պատասխան տուին Սրբազան Հայրն ու Ատենապետ Տէր Պետրոսեանը: Այցի մանրամասնութեանց մասին կարդալ Տիկին Արմինէ Յակոբեան-Ուիքսի յաօդուածը:

Բշ 22 Յուլիս – Սրբազան Հայրը նախագահեց Թեմական հերթական ժողովին որուն ընթացքին քննութեան առարկայ եղան Սուրբ Էջմիածնի գմբէթի, սիւներու եւ որմնազարդերու նորոգութեանց ծրագիրը, Թեմի ռազմավարութեան հարցերու նուիրուած փլանաւորման ժողովի արդիւնքները, Կոմիտասի ծննդեան 150ամեակին նուիրուած ձեռնարկները, Թեմական Պատգամաւորական ժողովի բանաձեւած որոշումները, հոգեւոր դաստիարակութեան եւ ֆինանսական հարցեր:

Կիր 28 Յուլիս – Վարդավառի տօնին առթիւ Սրբազան Հայրը մատուցեց Եպիսկոպոսական Պատարագ: Յաւարտ Պատարագին, ընկերակցութեամբ Տէր Աւետիս Քահանայ Համբարձումեանի, Տիարք Սարգիս Տէր Պետրոսեանի, Պետրոս Զօրլուի եւ Դիւանապետին, Սրբազան Հայրը Առաջնորդարանի մէջ ընդունեց Արցախէն ժամանած պատուիրակութիւնը յանձինս Արցախի Արտգործ նախարար Տիար Մասիս Մայիլեանի, Ազգային Ժողովի անդամ Տիար Դաւիթ Իշխանեանի եւ Արտգործ նախարարութեան մամլոյ պատասխանատու Տիար Արտակ Ներսիսեանի: Պատուիրակութիւնը հրաւիրուած է Աւստրալիոյ Հայ Դատի Յանձնախումբին կողմէ խորհրդակցութիւններ ունենալու քաղաքական բարձրաստիճան պաշտօնատարներու հետ Սիտնիի եւ Քանպերայի մէջ: Պատուիրակութեան կ'ընկերանային Աւստրալիոյ մէջ Արցախի մնայուն ներկայացուցիչ Քայլար Միքայէլեան եւ տիկինը: Ծանօթացման այս հանդիպումին արձարծուեցան 29 Յուլիսին տեղի ունենալիք Յարանուանութեանց հետ հանդիպումը, նոյն երեկոյեան տեղի ունենալիք ճաշկերոյթը կազմակերպութեանց ներկայացուցիչներու հետ ինչպէս նաեւ Արցախի ինքնորոշման, զբօսաշրջիկութեան եւ ապահովութեան առնչութեամբ տարուած աշխատանքները: Պրն Նախարարը Գանձասարի Վանքին նկարով հիւսուած գորգ մը նուիրեց Առաջնորդարանին:



Ծանօթացման այս հանդիպումին արձարծուեցան 29 Յուլիսին տեղի ունենալիք Յարանուանութեանց հետ հանդիպումը, նոյն երեկոյեան տեղի ունենալիք ճաշկերոյթը կազմակերպութեանց ներկայացուցիչներու հետ ինչպէս նաեւ Արցախի ինքնորոշման, զբօսաշրջիկութեան եւ ապահովութեան առնչութեամբ տարուած աշխատանքները: Պրն Նախարարը Գանձասարի Վանքին նկարով հիւսուած գորգ մը նուիրեց Առաջնորդարանին:



Բշ 29 Յուլիս – Պարոն Քայլար Միքայէլեանի բաղձանքով Սրբազան Հայրը հրաւերներ ուղղեց Հայ յարանուանութեանց պետերուն եւ եկեղեցական հայրերուն հանդիպումի մը համար Արցախէն ժամանած պատուիրակութեան անդամներուն հետ: Առաւօտեան ժամը 10ին Առաջնորդարանի մէջ Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Դիւանապետին, ընդունեց Հայ Կաթողիկէ Համայնքապետ Գերյարգելի Բարսեղ Ծայրագոյն Վարդապետ Սուսանեանը, Աւետարանական Համայնքապետ Վերապատուելի Յակոբ Սարգիսեանը, Աւստրալիոյ Հայ Աւետարանչական Ընկերակցութեան նախագահ Վերապատուելի Գրիգոր Եւմուշաքեանը, Արժանապատիւ

Հոգևոր Հայրեր Նորայր Ասազ Քահանայ Բաթանեանը, Պարթևի Քահանայ Գարագաշեանը, Աւետիս Քահանայ Համբարձումեանը, Արցախէն ժամանած պատուիրակութիւնը ընկերակցութեամբ Տէր եւ Տիկին Քայլար եւ Ժանէթ Միքայէլեանի, Թեմական խորհուրդի ատենապետ Պրն Մարգիս Տէր Պետրոսեանը, անդամ՝ Պրն Կարօ Ալաճաճեանը, Սուրբ Յարութիւն եւ Սուրբ Երրորդութիւն Եկեղեցիներու Ծխական Խորհուրդներու ատենապետներ Տիարք Պետրոս Զօրլուն եւ Նահապետ Խաչատուրեանը: Նախարար Մասիս Մայիլեան տեղեկացուց ներկաները ապահովութեան մասին ընդգծելով թէ համեմատաբար Արցախը աւելի հանգիստ է վերջին ամիսներուն ընթացքին, որ թոյլ կու տայ զբաղելու այլ հարցերով ինչպէս 2019ին քաղաքապետական ընտրութիւններ եւ Ապրիլ 2020ին՝ Նախագահական եւ Խորհրդարանական ընտրութիւններով: Նախարարը շեշտեց կարեւորութիւնը հոգևոր աշխատանքին եւ մեր վանքերու բերած նպաստը ոչ միայն հոգևոր դաստիարակութեան, այլ նաեւ անոնց զբօսաշրջիկային առաւելութիւնները: Ան բացատրեց թէ որքան կարեւոր էր վերանորոգութիւնը Երից



դաշնակցային մակարդակով: Միջազգային ճանաչման առնչուած Պրն Նախարարը տեղեկացուց թէ այդ առաջնահերթութիւն է սակայն Ատրպէյճանական խոչընդոտները շատ են: Պարոն Նախարարը յայտնեց որ Հայ ընտանիքի պահպանումը եւ մեր ասանդակական տոհմիկ արժէքներու պահպանումը հետեւողական աշխատանք են Արցախի պետութեան համար: Իսկ պետական ծրագրով կը քաջալերուին ծնունդները, որ իր արդիւնքը տուած է, ծնունդներու թիւը աճ է արձանագրած: Ինչ կը վերաբերի վերաբնակեցման ծրագրին Նախարարը ըսաւ թէ դանդաղ է այդ եւ խնդրեց հոգևոր հայրերէն քաջալերել այս գործընթացը: Միւս կողմէն ըսաւ թէ ենթակառոյցներ կը ստեղծուին պետութեան կողմէ վերաբնակեցման ծրագիրներուն գործադրման համար: Ան տուաւ Աւստրալիահայոց օրինակը որ 15 բնակարաններ պիտի կառուցուին Աւստրալիահայերու ԱՌԻ ծրագրին մէջ ներդրումով եւ իրենց կառուցած թաղամասը պիտի կոչուի Միտնի Թաղամաս՝ Քարվաճառի շրջանին մէջ: Պարոն Նախարարը եւ Պրն Իշխանեան իրենց գնահատանքը յայտնեցին Աւստրալիայէն տարուած աշխատանքներուն ինչպէս Առաքելական Եկեղեցոյ եւ Աւետարանչական ընկերակցութեան կողմէ կազմակերպուած շրջապտոյտները, մանկապարտէզներու ծրագիրները եւայլն: Ան ըսաւ թէ 2016ի Ապրիլեան պատերազմը հոգեբանական ազդեցութիւն ունեցաւ բոլորիս վրայ սակայն Հայու աննկուն կամքը յաղթանակեց եւ Հայութիւնը քաջալեր հանդիսացաւ Արցախեան ծրագիրներուն:



Մանկանց Վանքին, որուն վերանորոգման աշխատանքները բաւական մեծ գումարներու կը կարօտին: Ան առաջարկեց բոլոր յարանուանութիւններու միասնական ջանքով Աւստրալիոյ մէջ կազմակերպել բարենպաստ աշխատանք վերանորոգման ծրագրի յաջողութեան համար: Առաջարկը ողջունելի գտնուեցաւ Սրբազան Հօր եւ հոգևոր հայրերուն կողմէ: Նախարարը նաեւ բացատրութիւն տուաւ թէ Արցախէն արդէն տեղի կ'ունենայ արտահանում դէպի ԱՄՆ եւ կը կատարուի ներդրում զանազան սփիւռքահայ կազմակերպութիւններու եւ անհատներու կողմէ: Կարեւոր հանգամանք է դրամատնային համակարգ ունենալը, որ այսօր ունինք: Քաղաքական գետնի վրայ նախարարը եւ Պրն Իշխանեան բացատրեցին թէ կը սպասուի կազմել Աւստրալիոյ Արցախի Բարեկամներու խումբ նահանգային թէ

Ինչ կը վերաբերի խաղաղութեան գործընթացին Պրն Նախարարը յայտնեց որ Արցախը, Ազրպէյճանի ճնշումներուն պատճառով, բանակցութեանց չի մասնակցիր իսկ հարց մը չի լուծուիր եթէ խնդրոյ առարկայ կողմերը մասնակից չեն լուծման բանակցութիւններուն: Այս տեսակէտէն Հայաստանի պետութիւնը առաջ կը քաշէ Արցախի մասնակցութեան հարցը: Մենք Ազրպէյճանը զսպելու քաղաքականութիւն կը վարենք եւ աստոր մէջ Սփիւռքը մեծ դերակատարութիւն ունի, որովհետեւ եթէ ազգով ուժեղ ենք

այն ատեն միայն կրնանք թշնամին զսպել: Այժմ զինուորապետ ասելի ուժեղ ենք քան ինչ որ էինք 2016ի Ապրիլին, թեքնիքական մեր հնարաւորութիւնները ասելցած են սակայն Ագրպէլճանինն ալ ասելցած են, որոնց հակամիջոցները մենք ունինք: 2016էն ետք մեր մարտավարութիւնը պաշտպանողականէ յարձակողականի փոխուած է:

Հանդիպումի ասարտին Սրբազան Հայրը թելադրեց, որ Մնայուն ներկայացուցիչն ու յարանուանութեանց պետերը միասին հանդիպումներ ունենան եւ նախաձեռնեն մեր առաջ դրուած աշխատանքներուն:



Գիշերը, կազմակերպութեամբ Հայ Դատի Յանձնախումբին եւ անոր հրաւերով Գօլստըն Ճեմարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Բարի Գալուստի Ճաշկերոյթ, որուն, Սրբազան Հօր կողքին, մասնակցեցան Հայր Երեմիա Արքարեանը, Տէր Սւետիս Քահանայ Համբարձումեանը եւ Դիւանապետ Նշան Պասմաճեանը: Բարի Գալստեան խօսք արտասանեցին Սրբազան Հայրը եւ Հայկական երեք կուսակցութիւններու, ՀԲԸՄի, Համազգայինի, ՀՕՄի, ՀՄԸՄի եւ Հայ Դատի ներկայացուցիչները ինչպէս նաեւ Արցախի Մնայուն Ներկայացուցիչը: Խօսք առին Նախարար Մայիլեանն ու Պրն Իշխանեանը, որոնք վաղ առաւօտուն Քանպերա պիտի մեկնէին իրենց քաղաքական երկօրեայ հանդիպումները կատարելու համար: Ձեռնարկի ընթացքին տիրոջ մթնոլորտը ջերմ էր եւ միասնական:




Կոչ Հայ Համայնքին

Այսու կը տեղեկացնենք որ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարը հիմնական վերանորոգութեան կարիքը ունի: Սուրբ Էջմիածինը մեր հաւատքին միջնաբերդն է, մեզ կանգուն պահողը որպէս Քրիստոնեայ Հայեր, սրբազան Խորհուրդն է ան մեր ինքնութեան:

Այսօր փլուզումի վտանգին տակ են Մայր Տաճարի գմբեթը, պատերը եւ զարդանկարները: Ազգն է տէրը այս տաճարին եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նախաձեռնած է վերանորոգութեան աշխատանքներուն: Նորոգութեան ծախսը կը հասնի միլիոնաւոր Տոլարներու, որը կարելի պիտի ըլլայ փակել ազգի իւրաքանչիւր անհատի մասնակցութեամբ: Դրամահաւաքի աշխատանքին համար նշանակուած է «Մայր Տաճարի Նորոգութեանց Յանձնախումբ»ը ատենապետութեամբ Բարձրաշնորհ Տէր Յովնան Արք. Տէրտէրեանի: Թեմական Խորհուրդը կոչ կ'ուղղէ Հայկական բոլոր հաստատութիւններուն եւ անհատներուն զօրաւիզ հանդիսանալ դրամահաւաքի աշխատանքներուն, որոնց համար Յովնան Արքեպիսկոպոս պիտի այցելէ Աւստրալիա:

Յաւելեալ մանրամասնութեանց մասին յետագայ յայտարարութիւններով իրազեկ պիտի դարձնենք մեր համայնքին հաւատացեալ զաւակները:

ԴԻԲԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ



Լուրեր Ծովխերէն

ՄԵԼՊՈՒՐՆ Ս. Աստուածածին Եկեղեցի

*Երուսաղեմ – Հայաստան – Արցախ Ուխտագնացություն
28 Մայիս – 18 Հունիս 2019թ.*

Այս Տարի Մայիս 28 -ից մինչև Հունիս 18 - ը Մելբուռնի Ս. Աստվածածին Եկեղեցու Ծովխի անդամներից կազմված 30 հոգիանոց խումբը Հոգևոր Հովիվ Տեր Խաչեր քահանա Հարությունյանի Առաջնորդությամբ և Թեմիս բարեջան առաջնորդ Գերաշնորհ Հայկազուն արքեպիսկոպոս Նաջարյանի օրհնությամբ կատարեց Ուխտագնացություն Սուրբ Երկիր – Երուսաղեմ, Հայաստան և Արցախ:

Երուսաղեմի ուխտագնացության կազմակերպումը և առաջնորդությունը սիրահոժար հանձն էր առաել Երուսաղեմի Հակոբյանց Վանքի միաբան Հոգեշնորհ Հայր Թեոդորոս Վարդապետ Զաքարյանը: Ուխտագնացության ընթացքում խումբը այցելեց Ս. Հարության տաճար, Հոկոբյանց վանք, Ջիթենյաց լեռ, Սիոնի, Գալիլիայի և Նազարեթի սրբավայրեր, Պաղեստին Ս. Ծննդյան տաճար, Հայոց Ս. Փրկչի վանք, Հորդանան գետը, Եաֆայի Ս. Նիկողայոս Հայոց վանք, Պայծառակերպության Թաբոթ լեռ և այլ սրբավայրեր: Ուխտավորները առիթ ունեցան մասնակցելու Համբարձման տոնին նվիրված Սուրբ և Անմահ Պատարագին Համբարձման - Ջիթենյաց լեռան վրա, նաև կեցգիշերի Սուրբ Պատարագի հոգեպարար արարողության Սուրբ Հարության Տաճարում Մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի օրհնաբաներ գերեզմանին: Բեթլեհեմի Ս. Ծննդյան Քարայրում ուխտավորները մասնակցեցին Սուրբ Պատարագի : Երուսաղեմի Հայոց Պատրիարք Մեծապատիվ Տեր Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկյանը ընդունեց և իր օրհնությունը բաշխեց Ուխտավորներին՝ հատկապես կարևորելով Ուխտավորների այցելությունը Սուրբ երկիր գորակցելու Հայոց զինվորյալ Միաբանությանը և տեր լինելու Հայ Առաքելական Եկեղեցուն տրված հսակայակն ժառանգությանն ու իրավունքներին:

Երուսաղեմից մեկնելու վերջին ընթրիքին մասնակցում էին Հայր Թեոդորոսը և Աշոտ Սարկավազը որ մեծապես օգնեցին մեզ սահուն անցկացելու մեր ուխտագնացությունը: Ընթրիքի վերջավորության Հայր Սուրբը ներկաներին հանձնեց Երուսաղեմի Հայոց Պատրիարքի կողմից մակագրված վկայագրերը՝ փաստելով իրենց Երուսաղեմի ուխտավոր լինելու մեծ պատիվը:



Հունիսի 9-ին խումբը Իսրայելից օդանավով մեկնեց Թբիլիսի Վրաստան, որտեղ առիթ ունեցանք աղոթելու Թբիլիսիի Առաջնորդանիստ Ս. Գևորգ Եկեղեցում, խոնարհվելու Մեծն Աշուղ Մայաթ Նովայի գերեզմանին իսկ երեկոյան պտույտ կատարել պատմական Թբիլիսի քաղաքում:

Հունիս 10 – 20 Ուխտավորների խումբը մեկնեց Պատմական Հայրենիք, դեպի Մանահին Հաղբատ, Երևան, Էջմիածին, Սևան, Ծաղկաձոր, Խոր Վիրապ, Նորավանք, Տաթև, Քարհահունջ, Խնձորեսկ: Ազատագրված Արցախում այցելեց Շուշիի Ղազանչեցվոց եկեղեցի, Ստեփանակերտ, Գանձասար, Ասկերանի Բերդ, Աղղամ և Տիգրանակերտի հնավայրը: Էջմիածին այցելելու ժամանակ ուխտավորները հանդիպեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ կաթողիկոսին

առնելով Հայրապետական օրհնություն: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ հիշեց ամիսներ առաջ իր Հովվապետական այցելությունը Ավստրալիա և մաղթեց առաքելաշավիղ Սուրբ Էջմիածնից ճառաքող օրհնությամբ մխիթարված ու նորոգված վերադառնալ Մելբուռն ու շենացնել համայնքային կյանքը:

Իբրև անրադարձ կուզենք նշել որ Ուխտագնացությունը Քրիստոնյաի համար լոկ ճամփորդություն չէ, այլ հոգևոր երթ նորոգելու իր հավատքը, վերստին կնքելու ուխտը Աստծու հետ, վերստին գտնելու իր իքնությունը իբրև Քրիստոսի հավատարիմ հետևորդ, իբրև հայրենիք սերը իր սրտում ամուր պահած ազնիվ Հայորդի:

Ուխտագնացությունը աղոթքի և ապաշխարության, ինքնամաքրումի ճամփորդություն է, որի թագն ու պսակը Աստծուն վերագտնելու բաղձալի ուրախությունն է: Օտարության մեջ ապրող հայ մարդու համար ուխտագնացությունը Մայր Հայրենիքի մեջ իր ինքնության ճանաչման և վերաարժևորումի ճամփորդություն է, որի պտուղը հայրենասիրության խանդաղատ կրակի բոցավառումն է իր սրտի ու հոգու մեջ:

**Տեր Խաչեր Քահանայ Յարութիւնեան
Հոգևոր Հովիւ Մելայուրնի Սուրբ Աստուածածին Եկեղեցւոյ**



Պրիսպրն, Քուինսլենդ



Հուլիսի 20-ին շաբաթ օրը Ավստրալիայի և Նոր Զելանդիայի Առաջնորդ Բարձրաշնորհ Տ. Հայկազուն Արք. Նաջարյանը ընկերակցությամբ Արժանապատիւ Տեր Ավետիս Քահանայ Համբարձումյանի, թեմական խորհրդի նախագահ Սարգիս Տեր Պետրոսյանի, Բարեշնորհ Վարդան Սարկավազ Էլմասյանի և բարերար Ավետիս Թևանյանի, այցելեց Քուինսլենդի հայկական համայնքը: Համայնքն այստեղ փոքր է, բաղկացած է շուրջ 100 հոգուց: Սրբազան Հայրը պատարագ մատուցեց Մբ. Կլեմենտ կաթոլիկ եկեղեցում՝ խրախուսելով ներկաներին լինել միասնական, կապ պահպանել Առաջնորդարանի հետ, որպեսզի չկորի հայի

ջանքեր ներդնել ավելի հաճախ հավաքվելու և հայկական պատարագներ անցկացնելու, որպեսզի չկորի հայի էությունը և իր կրոնը:

Պատարագից հետո Սրբազան Հայրն օրհնեց ճաշի սեղանը, և բոլորը միասին Տերունական Աղոթք կարդացին: Այս հավաքույթը բոլորի համար լավ հնարավորություն էր համախմբվելու, և նրանք, ովքեր առաջին անգամ էին մասնակցում նման հավաքույթի, հնարավորություն ունեցան ծանոթանալու համայնքի անդամներին և ներկայացնել իրենց:

Համայնքի անդամները Սրբազան Հոր հետ քննարկեցին իրենց խնդիրները և խորհուրդ քաղեցին իրենից: Սրբազան Հայրը ներկաներին օրհնված խաչեր նվիրեց:

Համայնքի անդամներն իրենց խորին շնորհակալությունն են հայտնում Սրբազան հորը և մյուս հարգարածան հյուրերին, ինչպես նաև Արամ և Սոնա Կարապետներին և Քուինսլենդի հայ համայնքի կազմակերպչական կոմիտեի անդամներին այս միջոցառումը կազմակերպելու համար:



Արմինե Հակոբյան - Կուլտ Քոսթ

Հարցազրոյց Մխիթարեան Միաբան Հայր Վահան Ծայրագոյն Վարդապետ Օհանեանի Հետ



Հայր Սուրբին Աւստրալիա ժամանումէն օգտուելով Փարոս հարցազրոյց մը խնդրեց իրմէ իր տարած աշխատանքին եւ ապագայ ծրագիրներուն մասին:

Հայր Վահան անխոնջ եւ բժախնդիր ուսումնասէր մը եղած է որպէս Վենետիկի Մխիթարեան միաբան: 1980-86 Pontificia Universita San Tomasso d'Aquino համալսարանի մէջ հետեւած է Աստուածաբանութեան եւ իմաստասիրութեան դասընթացքներու, 1987ին, 25 տարեկանին, ձեռնադրուած է կուսակրօն քահանայ: Հայերէնէն բացի, ան կը տիրապետէ Իտալերէնի, Անգլերէնի, Ֆրանսերէնի եւ Արաբերէնի: Հրատարակած է Իտալերէնէ Հայերէն եւ Հայերէնէ Իտալերէն բառարաններ: Հայր Սուրբը ստանձնած է շատ մը պատասխանատու պաշտօններ ինչպէս Սուրատ Ռափայէլեան վարժարանի տնօրէնութիւն, Միաբանութեան ընդհանուր քարտուղարութիւն, պատասխանատուութիւն Մխիթարեան

հրատարակչատան: Բազում աշխատութիւններէն կարելի է յիշել Վենետիկի Սատենադարանի «Յուցակ Ձեռագրաց»ի ծրոյցի հատորի եւ «Հայկական Ձեռագիրներ»ու Բ հատորի խմբագրութիւնը: Հայր Վահան Հայոց լեզուի եւ գրաբարի հնուտ ուսուցիչ է: 2011ին հրատարակած է «Armenians at the Twilight of the Ottoman Era» - «Հայերը Օսմանեան Կայսրութեան Վերջալոյսին» հաստատվոր աշխատութիւնը: Վերջին տարիներուն ան նուիրուած է Հայոց Յեղասպանութեան ուսումնասիրութեամբ, կեդրոնանալով յատկապէս Ֆրանսայի Նանթ քաղաքի Արտաքին Գործոց Նախարարութեան արխիւներուն վրայ: Աւստրալիայի մտաւորական Արա Քէթիպեանի համագործակցութեամբ մինչեւ օրս հրատարակած է «The Armenian Genocide Prelude and Aftermath as Printed in the US Press (1890-1922)» - «Հայոց Յեղասպանութիւնը Նախերգանք եւ Հետեւանքներ Ինչպէս որ Հրատարակուած է Ամերիկեան Մամուլի Մէջ 1890-1922»ի առաջին հինգ հատորները: Հայր Վահան այժմ կը վարէ Մխիթարեան Միաբանութեան Սատենադարանապետի պաշտօնը՝ Սուրբ Ղազար, Վենետիկ:

Իմը.

Փարոս – Բարի ժամանում ի Սիտնի: Շնորհաւոր ըլլան ձեր աշխատութեան առաջին 5 ծաւալուն հատորները: Մեր ընթերցողները կրնա՞ք տեղեկացնել թէ ինչո՞ւ, ինչպէ՞ս եւ ե՞րբ սկսաք այս ծրագրին:

Հայր Վահան – Երկար տարիներ առաջ մտածած էի այս ծրագրին մասին, որ հսկայ աշխատանք կը պահանջէր: Կարգ մը նիւթեր հաւաքած էի եւ ահաւասիկ, 2007 թուականին հանդիպեցայ պատմագետ Վիգէն Բարգէնեանին: Վիգէն իր հաւաքած նիւթերը ցոյց տուաւ եւ այդ հանդիպումը մղիչ ուժը դարձաւ յետագայ աշխատանքին: Դարձեալ կարելի պիտի չըլլար այս աշխատանքը շարունակել եթէ չըլլային երեք Կիւմրեցի Հայ օրիորդներ, յանձնա Միբանու Մինասեանի, Քրիսթինէ Մխիթարեանի եւ Էսմարիտա Պօղոսեանի, որոնք անխոնջ աշխատանք տարին յօդուածներու հաւաքման եւ ընդհանուր ցուցակներու նախապատրաստական աշխատանքներու մէջ:

Փարոս – Իմացած եմ որ 5 հատորներու տպաքանակը 1000 օրինակ է: Այսպիսի հսկայածաւալ աշխատանքը հսկայ ծախս կ'ենթադրէ: Ինչպէ՞ս կարողացաք տպել զանոնք:

Հայր Վահան – Ճիշտ էք: Ողջ ըլլան այն գիտակից բարերարները, որոնք յանուն արդարութեան եւ Յեղասպանութեան նահատակներու արեան կանչին իրենց մասնակցութիւնը բերին եւ երաշխաւորեցին այս հատորներու հրատարակութեան ծախսը: Անոնք են Հայաստանէն՝ Վիվասէլը, Հասրաթեան-Մինասեան Հիմնադրամը, Մոսկուայէն՝ Պրն Ռուբէն Գրիգորեանը, Սրապեան հաստատութիւնը՝ Միլանօ, Տիար Վահէ Կապրաշ՝ Զուլիգերիա

եւ Աւստրալիայէն՝ Տեարք Զօհրայ Գըվըրեան ու Ճոն Նազարեան: Յիշատակութեան արժանի է, որ 50 շարք Հայաստանէն Աւստրալիա բերելու ծախսը հոգաց Միտնիաբնակ Պրն Աւօ Թեւանեանը: Յայտնեմ նաեւ որ Աւստրալիացիները միշտ դրական արձագանգած է հայանպաստ որեւէ կոչի:

Փարոս – Իսկ մեր ընթերցողները ինչպէ՞ս եւ ուրկէ՞ կրնան ձեռք ձգել այս հատորները եթէ ուզեն գնել զանոնք:

Հայր Վահան – Չեմ ուզեր յուսախաբ ընել ընթերցողները սակայն այս գիրքերը պիտի չվաճառուին բնաւ: Անոնք պիտի նուիրուին կարեւոր հաստատութիւններու, գրադարաններու, հետազօտական կեդրոններու եւայլն: Աւստրալիոյ մէջ ցրտումի աշխատանքը ստանձնած է Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան Միտնիի մասնաճիւղը: Անցեալ ամիս Նիւ Սաութ Ուելլզի Օրէնսդիր Խորհուրդի (Օերակոյտ) նախագահ Պրն Ճոն Աճաքա Խորհրդարանին մէջ ընդունելութիւն մը տուաւ ի պատիւ ինձի եւ ինք ստանձնեց կարգ մը հաստատութիւններու ուղարկել հատորները:

Փարոս – Այդ պարագային ինչպէ՞ս հասանելի պիտի ըլլան անոնք հետաքրքրուող մտաւորականներու:

Հայր Վահան – Անոնք պիտի գետեղուին յատուկ կայքէջերու մէջ, հասանելի բոլորին:

Փարոս – Ասկէ առաջ պրպտողներ եղած են եւ պատճենահանումներ կատարուած են Ամերիկեան զանազան թերթերէ եւ ականատեսներու վկայութիւնները հրատարակուած: Ինչո՞վ կը տարբերի ձեր հրատարակութիւնը միւսներէն:

Հայր Վահան – Մեր ուսումնասիրութիւնները նախ ամբողջական են, կը ներառեն նաեւ վկայութիւններ Յոյներու եւ Ասորիներու Տեղասպանութեանց մասին, օտար միսիոնարներու եւ հիւպատոսներու, մղուած հերոսամարտերու, նամակագրութիւններու մասին: Անոնք ոչ մէկ ձեռով գրաքննութեան չեն ենթարկուած, այսինքն եթէ թերթերուն մէջ ոչ հայանպաստ վկայութիւններ կան՝ զանոնք ներառած ենք, եթէ մեր ակնոցով չափազանցութիւններ կան՝ դարձեալ ներառած ենք: Մենք տուած ենք վկայութիւնը այնպէս ինչպէս որ է, ճշդումներն ու վերլուծումները թողելով ուսումնասիրող պատմագետին, քաղաքագետին, ընկերաբանին եւայլն: Երկրորդ, այս գիրքերը պատճենահանում չեն այսինքն ֆօթօքոփի չեն այլ մենք զանոնք մեքենաշարած ենք ամենայն բժախնդրութեամբ: Երրորդ, իրաքանչիւր թերթի հատորի կամ հատորներու աւարտին կը գտնուէր ցուցակագրում (Index), որ բժախնդիր եւ արհեստավարժ անձին համար իսկ ժամանակ խլող հսկայ աշխատանք է: Չորրորդ, երբ փաստած ենք որ տեղանունի մը կամ անձի մը անունը սխալ տպուած է, մատնանշած ենք մեր կարծիքը, ապագայ հետազօտողին գործը դիւրացնելու նպատակով:

Փարոս – Իսկ Ամերիկեան ո՞ր թերթերուն մասին է ձեր խօսքը:

Հայր Վահան – 6 Թերթեր: The Chicago Daily Tribune, The New York Times, The Boston Daily Globe, The Washington Post, The Los Angeles Times, The Christian Science Monitor:

Փարոս – Ձեր ապագայ ծրագիրնե՞րը:

Հայր Վահան – Շատ են: Երբ Ցուցակագրումը վերջանայ 5 հատոր եւս պիտի հրատարակենք, ուրեմն ամբողջացուցած կ'ըլլանք 1890էն 1922 թուականներուն Հայկական ջարդերու եւ Տեղասպանութեան մասին վերոյիշեալ 6 աշխարհահռչակ թերթերու վկայութիւնները: Կը մնայ կայքէջերու մէջ զանոնք գետեղելու բաւական դժուար աշխատանքը:

Այս աշխատանքին առընթեր սկսած եմ Հայր Ղեւոնդ Ալիշանի նամակներու հաւաքման (1840-1901), ուղղուած Միխիթարեան Հայրերու, Հայ Առաքելական Եկեղեցւոյ Կաթողիկոսներու, Հայ եւ ոչ Հայ գիտնականներու, արուեստագետներու, պատմագետներու եւայլն: Այս նամակներէն մաս մը ձեռք բերուած են Ս. Փեթերսպուրկի եւ Վենետիկի պետական արխիւներէն: Ալիշանի եղբայրը՝ Սերովբէ Ալիշան եղած է դրամագետ եւ յատուկ կապեր ունեցած է աշխարհի զանազան թանգարաններու հետ, որոնց կարգին Լուվրի թանգարանը: Այս կապերը նպաստած են Հայր Ղեւոնդ Ալիշանի հետազօտական աշխատանքներուն: Նամակները հաւաքելէ ետք պիտի հրատարակենք զանոնք, որոնց թիւը կ'անցնի 2000ը, հաւանաբար 5 հատորներու մէջ:

Փարոս – Ձեր աննկուն կամքին շնորհիվ վստահ եմ որ պիտի կարենաք մեծ ժառանգ թողուլ Հայ ժողովուրդին: Ձեզի կը մաղթենք առողջություն եւ յաջողություն ձեր բոլոր ազգանպաստ ծրագիրներուն մէջ: Արդեօ՞ք որեւէ պատգամ ունէիք Փարոսի խմբագրութեան եւ ընթերցողներուն:

Հայ Վահան – Շնորհակալ եմ որ Փարոսը երկու տարիէ ի վեր անընդմէջ կը հրապարակուի եւ տեղեակ կը պահէ մեզ Աւստրալահայ գաղութի կեանքին մասին: Որպէս Միխիթարեան Միաբանութեան մէջ թրծուած ուսումնասէր մեծապէս կը գնահատեմ ձեր աշխատանքը եւ յարատեւութիւն կը ցանկամ: Յարատեւութեան մէջ է յաջողելու գաղտնիքը: Իսկ Փարոսի ընթերցողներուն խորհուրդ կու տամ քաջալերել այս ամսաթերթը, որուն ճշգրիտ, բժախնդրութեամբ, երկլեզու տպուած լուրերը ապագայ պատմաբանները պիտի օգտագործեն եւ այդպիսով դուք ալ ձեր կարգին ժառանգ պիտի կարենաք թողուլ Հայ ազգին:

Հարցազրոյցը վարեց Նշան Պասմաճեան



Քահանայից Պատրաստման Համար Ընդունելություն 2019-2020 Ուսումնական Տարեշրջանին

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քահանաներու պատրաստութեան պատասխանատու մարմինը կը յայտարարէ 2019-2020 ուսումնական տարուան ընդունելություն: Կրնան ընդունուիլ մինչեւ 45 տարեկան, ամուսնացած կամ ամուրի, բարձրագոյն կրթություն ունեցող այն անձերը, որոնք զուակ են Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ: Ուսումը երեք տարուան համար է: Ուսման ընթացքին սաները կը ստանան կրթաթոշակ:

Ընդունելութեան համար դիմորդները պէտք է մասնակցին հարցազրոյցի հետեւեալ նիւթերու շուրջ.

1. Սուրբ Գրքի իմացություն,
2. Հայ Եկեղեցւոյ պատմություն,
3. Հայ ժողովուրդի պատմություն,
4. Հայ գրականություն,
5. Եկեղեցական փորձառություն,
6. Ինքնարտայայտուելու կարողություն:

Յաւելեալ մանրամասնութեանց եւ բացատրութեանց համար կը խնդրուի դիմել
Առաջնորդարանի Դիւանատուն մինչեւ 10 Օգոստոս 2019
Հեռաձայն 91614000 կամ իմէյլով՝ diocese@armenian.com.au

ԴԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

DIOCESAN NEWS

Tuesday 2 July – The Primate of Australia and New Zealand, His Eminence Archbishop Haigazoun Najarian presided over the Properties Committee periodic meeting.



Wednesday 3 July - The Archbishop, accompanied by Reverend Father Avetis Hambarzumyan, Diocesan Council members Sarkis Der Bedrossian, Stepan Kerkyasharian, Garo Aladjadjian, Kevork Tchaprazian and Chancellor Nishan Basmajian, visited the NSW State Premier the Hon Gladys Berejiklian in her Martin Place offices to congratulate her on her recent election win and to convey the best wishes and blessings of the Armenian community. The meeting continued for an hour, and as always the Premier greeted the delegates with her bright smile and warmth. Discussions covered the flourishing of our country and the positive impact of the Premier's planning with and her Ministerial Cabinet; the Premier's relationship with the Armenian community; current

issues pertaining to religious freedom; suggestions were made regarding the commemoration of religious events at Parliament House. The Premier accepted the plausible suggestions and assured the delegates she would do her utmost to bring them to fruition. Before taking leave, on behalf of the Armenian community and the Diocese, the Archbishop presented a sacred religious print to the Premier, which was warmly received. During the last few years, the Premier has achieved great successes in the NSW Parliament as a staunch advocate of multiculturalism; maintaining a steadfast support of the Armenian Cause and the Armenian community in all efforts. The Premier accepted the Primate's invitation to visit the new Diocesan Centre.

Friday 5 July – Archbishop Najarian received the Permanent Representative of Nagorno Karabakh to Australia, Mr Kaylar Michaelian and the Armenian National Committee of Australia Committee executive director Mr Haig Kayserian. The meeting focused on hosting an Artsakh delegation. The Primate gave assurance of his support and representatives to assist.

